

Աքաղաղին հետ աչուրնին կը բանան, Արշալոյսին հետ աչուրնին կը լուան, և լուսոյ մկրտութիւնն իրենց աչուրն և իրենց հոգին ամեն օր և ամենէն առաջ կ'ընդունին: Արեւը, որ արարածոց արարիչ երկնաւոր հօր կողմէն երկնքին մէջ կը պտըտի՝ հսկող և հոգացող մեր այս երկրագունդին, արեւն ամեն առաւօտ ամենէն առաջ կը տեսնէ դաշտի մարդն ու ծովու մարդը, և անոնց քրանալինջ անարատ ճակտին վրայ իր արու առաջարար համայնութեան խանգը կ'սպառէ:

Գիշերը կանաչ դաշտին անսահմանութիւնն երազեց հոգագործ մարդը. գիշերը կապոյտ դաշտին անսահմանութիւնը՝ նաւալար մարդը. և առաւօտուն, աչքը հօգին մարդուն և աչքը ծովին մարդուն՝ երկինք նայելով երկնաւոր Հօրը բոցափայլ պատկերին՝ կ'իջնեն կանաչ դաշտին ու կապոյտ դաշտին վրայ, ուր ոսկի ոգեւորագ շողոյն բերապատկութիւնն ալ կ'իջնան աքաղաղին զարթնումէն մինչեւ աղանեկին թեւամկտութեամբ, մինչեւ Արեւսեկին երեւումը:

Յերեկը բոլոր, ատուրնեան ժամերը բոլոր, հովուն ու ծովուն վրայ բոլորանուէր կ'աշխատին բնութեան բարեաց այն անդրանիկ պարգեւաւորները: Գոգեցես իրենց համար այնքան զուարթ է արեգակը, իրենց կանխազարթոյց սովորութեանը, իրենց անվհատ աշխատասիրութեանը, իրենց գոհութեանն ու գոհարանութեանն համար. իր դաշտին, իր արգասաւորութիւնը գոգեցես իրենցմէ կ'առնէ հողը, իր աղն իր առաւգութիւնը գոգեցես իրենցմէ կ'առնէ ծովը, մշակ մարդէն ու նաւաղ մարդէն, — ա'յնքան Արեւին իրենց հաւատարմութեանն ոյժ եւ աշխոյժ առած են, ա'յնքան Արեւին իրենց հաւատարմութեամբ՝ տիեզերաց կենդանապարգեւ աստղին հետ նոյնացած են անվթար մարդը հողուն, անվթար մարդը ծովուն:

Գրկարացութեան պէս շարժում մը հողը, գրկարացութեան պէս շարժում մը ծովը կ'առնենայ, երբ մշակն արտին մէջ երեւայ, երբ նաւաղն ալեաց վրայ երեւայ, — ա'յնքան բնութիւնը կը սիրէ պարզ անվթար մարդը, ա'յնքան բնութիւնը կը սիրէ աշխատութիւնը:

Հողը թուեղ կ'եղնէ, ծովը թուեղ կ'եղնէ, երբ արօրը կը թաւալի, երբ առագաստը կ'ուռի, կը փորուի ու կը բարձրանայ հողը, կը փորուի ու կը բարձրանայ ծովը, երբ մաճը կը շարժի և արօրը կը գլորի, երբ զոյգ թիւակը թեւ ի թեւ կ'երեւայ ու միակ լայնարձակ առագաստի լաթն հեւ ի հեւ կ'ուռնայ. բնութեան դնդ երբ՝ մարդկային մարմնոյն դնդերաց հետ՝ կը բարեփառակին եղանիւ հերկի սիրուն սայլակին շարժմամբ, ու բնութեան լանջքը չէ՞ որ կը հեւայ կը բարախ լաթի լեցուն ստինքին տակ, որ ցերեկն ի բուն գոգեցես ցայգուն Ծիր-կաթինին կաթը կը յօրինէ՝ գիշերն ալ գոգեցես շրթունքը ըլլալով Յարգողին լուսեղէն կաթին:

Ամպերը կուգան երբեմն Արեւուն երեսը կը ծածկեն, և ահա ստուերը կանանչ ու կապոյտ դաշտին անսահմանութիւնը կը ծածկէ: Հովը՝ ահագին աներեւակ օդային հաւու մը նման՝ իր լայնատարած թեւերը կը բանայ և արշաւակի կ'ընթանայ հասկե-

րուն վրայէն՝ որոնք կը տնկեն ստուենին: Թուի թէ բնութիւնը փորձել կ'ուզէ մարդը, հողին մարդն ու ծովին մարդը: Շոյեղով բնութիւնը՝ մարդը կը մաքառի բնութեան դէմ, փոշին ու փրփուրը կը կլնէ, փայլակն ու փոթորիկն իր ճակտին ու կուրծքին վրայէն կը սահեցնէ. և թուի թէ մարդոյն քրտամբք ոռոգուած երկնից անսահման դաշտն արեւը կամ աստղերը վերստին կը բուսցնէ. թուի թէ փոթորիկն յաջորդող պայծառալինջ մթնոլորտն իր տխրամերժ հոգեոյն ցոլացումն է, հոգեոյն հողի մարդոյն ու ծովի մարդոյն:

Կինն ու լաճութիւն իրեն հետ են արտին մէջ՝ մշակին հետ. կինն ու լաճութիւն իրեն հետ են նաւաղին հետ, կամ ծովափէն զինքը կը գլտեն՝ նաւաղը: Անոնց ալ պայմանն աշխատութիւնն է, անոնց ալ դնդերըն ու ժող է, անոնց ալ հոգեակը վճիտ անտրուտ է: Անոյշ կաթը կը խմեն, աղի հացը կ'ուտեն, այրերն առանց վարանումի կին կ'առնեն, մայրերն առանց ցաւի զաւակ կ'ուենան, մանչերն առանց գգալուսյը կ'ըլլան, աղջկունք առանց դրամոթիտի հարս կ'ըլլան, կամ պարկեշտութեան միակ դրամոթիտով՝ հողուն և ծովուն մարդոց աղջկունք հարս կ'ըլլան:

Իրենց երգը խոտերուն եւ ստուեններուն ձայներէն իր եղանակը կ'առնէ, կամ թէ ալիքներուն շաղկապումէն կամ աւազին վրայ ալեաց կողկողանքէն. միօրինակ՝ այլ սրտագին, սրտառուչ, պարզութեանը մէջ վսեմ է հողի ու ծովի մարդոյն երգը, զոր բնութիւնը տուն կուտայ և բնութիւնը մրտիկ կ'ընէ:

Եւ մշակն ու նաւաղն Աստուծոյ ձայնը կը լսեն բնութեան ձայներուն մէջ, Աստուծոյ գոհարանութիւն կ'ընեն իրենց առաւօտի և իրիկուան աղօթքին մէջ, կ'աղբին աշխատութեամբ ու հաւատքով եւ կը մեռնին առանց ոգեւորի, աչք ի յերկինս:

Այս եղաւ, Պետո՛, այս առտուան իմ առաջին խօսքս. աշխատութեան ու երախտագիտութեան երգն է այն, զոր քեզ կը ձօնէ՝ իր աղատարարին՝

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՆԵԱՆ

Առ Ա. Սուրենեան

Սոյն առաջին խօսքս առաւօտեան՝ Պետո՛ին հետ և Ձե՛զ կը ձօնեմ և Ձեր անձնուէր խնամասէր աղնիւ Տիկնո՛յ, որպէս և սիրելի հօրեղբորորդուոյ՝ Լեւոն Տէմիրճիպաշեանին, և իր քեզ՝ սիրասուն ի՛մ ալ քոյրերուն, որք սառած զօղազին մարմինս կենսանորոգեցիք և իր սիրելի աղգին վերընծայեցիք եղիան:

2 յունիս 1893, Գառնբէյ

ՏՐԴԱՏ ՎԱՐԴ. ՊԱՆԵԱՆ (Առաջնորդ հայոց կեսարիոյ). ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ Ի ԹՈՒՐԻՒՄ. Հատոր Ա. Տետր Բ. — Յուզակ հայերէն ձեռագրաց Ս. Ասուածաձեռնայ եկեղեցւոյն Կեսարիոյ եւ Ս. Գեորգ եկեղեցւոյն Գրեգորիի. Գին 7 դրու:

Յ. ԳՈՒՐԳԷՆ. Պատկեր աշխարհիկ գրականութեան. Հատոր Բ. Տետր Ա. և Բ.: Գին իւրաքանչիւր տետրի 100 փարս:

ՀԱՅԱԹԵՐ

Եօթն օրը մի անգամ Ծաղիկի հրատարակութիւնը չնեքեր ինձ հանրային խնդիրներու նկատմամբ կազմած գաղափարներս ու զգացած տպաւորութիւններս լիւրի ի հանդէս ածել, ամէն առաջարկուած հարցի, մտացոյց ներկայացած ամէն խնդրոց վրայ կը պատրաստուիմ գրել օր մը, յաջորդ օրն ուրիշ մ'երեւան կուգայ և կարեւորութեան կողմանէ նախապատուութիւն կ'ստանայ նախորդ օրուանին վրայ, երբորդ օրը դարձեալ նոյն վիճակը կ'ուենեամ մի այլ խնդրի համար և այսպէս օրերն ու գրելու նիւթերը կը յաջորդեն միմեանց. շաբաթը կը լրանայ և կը տեսնեմ թէ միաքս քսոս մ'է դարձեր, ամէն մտածութիւնք, ուսումնասիրութիւնք խառն ի խառն, անկերպարան ժուռ կուգան ուղեղիս մէջ և... ահա գըրաշարը կ'իմացնէ թէ՛ նոր ձեռագրի տեղ չէ մնացած թերթին մէջ. — լաւ՝, գալ շաբաթու կը գրեմ, կ'ըսեմ, ու ազատ շունչ մը կ'առնեմ:

Եւ Ծաղիկն երկու թիւ տպուեցաւ այսպէս, առանց Շաբաթի:

Խզճի խայթ մը կ'զգամ սակայն բոլորովին լուռ մնալով այնպիսի խնդրոց վրայ, որոց հանրական կարեւորութիւնն ուրիշ թերթերու, ինչպէս և ժողովրդեան կարծեաց մէջ, գերակշիռ տեղ մը սկսած է գըրաւել. խմբագրականներու արժանի այդ խնդիրներն այժմէն չարաթական տուրապիս մէջ կը զետեղեմ, յարմար առթիւ գուրս բերելու համար:

* * *

Զոհրապ վերստին կը խառնէ պանդխտութեան յաւիտեական վերքը, բայց չը գտնէր հոն փոստիտի նշաններ. ըստ իրեն, այդ վերք կարծուածն առ հասարակ ընկերային մարմնոյն արտաշնչութեան ծակն է, թէպէտ շարաւայից, այլ կենսանորոգ. «Պանդխտութեան բարեկամ եմ», կ'աղաղակէ այնպիսի սրտառուչ աղբուրութեամբ ու խորին համոզումով. որ արձագանք պիտի լինէ իւր ձայնին՝ եթէ վստահ լինէի որ հիմնովին ու շուրջանակի ուսումնասիրած է այդ դժնդակ հարցը. այդ ուսումնասիրութիւնը կարելի չէ կատարել մէկ աւուր, մէկ ամսոյ, նոյն իսկ մէկ տարւոյ մէջ, և այս լայնածաւալ ու համազային քաղաքին մէջ, Պէտք է պանդխտութեան համայնապատկերն ունենալ աչքի առաջ, պանդխտութեան սերունդ աստ, ի Պոլիս, պանդխտին ընտանիքն հարցասիրելի գաւառին. ներքին ցաւ երուն, ջլտախչ ու քայքայիչ տխրութեան վերահասու ըլլալ պանդխտի ընտանիքին:

Պանդխտութիւնը բարիք մ'է, ամենակերպ զարգացման գլխաւոր զաւանակն է. բայց պանդխտը նախապէս պանդխտութեան պատրաստուելու է. բնդհանրապէս վանեցին, Մշեցիին կամ Գեղեցիին, առանց բարձր ձգտումներու, ամուսնութեանն անմիջապէս յետոյ՝ թողնով հայրենի տունն ու նորահարս իր կինը՝ կը գնայ թափառիլ անձանթիւն մէջ, ուր շատ անգամ, հետքն ամուսնան մը մէջ կ'որոտեցիք գերեզման մը, իւր գիւղին մէջ անմխիթար ու անապուշտ ամուսին մը և զուցէ՛ որբուկ մը լքեալ կը թողու անդ: Անձանթիւն (բացառութեանց մասին իսկ զգոյշ ըլլանք) պատուարեր ու

երջանակաբեր չըլլար իրեն. զարգացման տեղ կ'ընդունի մարմնայ տնտեսությունն և հիւժուսն ու բարոյականի աւերումը. պանդուխտն անտաշ մտօք դուրս կ'ենէ խըրճիթէն, տասնեակ տարի յետոյ դարձեալ անտաշ մտօք կը վերամտնէ հոն, սակաւիկ աւելցուցած դրամն ընդ հոսով մոխրու եւ գարձեալ պարտքի տակ հեծեւը համար. տարած դրամին հետ չ'անհետանար սակայն և այն տնտեսութեանն ու հիւժումը մարմնայն զոր կը փոխանցէ իր կնոջ, իր զաւակաց, իր պարտաւորից. եթէ տեղւոյ մը պանդուխտներէն հինգ առ հարիւր յաջողէին զարգանալ, ընկերական լաւ դրից տիրանալ, քանի՜ իրաւունք պիտի տայի Զօհրային:

Բայց կը ձայնակցիմ իրեն գովեստիւ հաշակելու պանդխտութեան, երբ կեսաւրացեաց կամ Ակնեցեաց կ'անարկէ, կամ Պոլսոյ մահալլէպիով անանդ երիտասարդութիւնը կորովի կամեցողութեան տէր ընելու գիտամբ կը գրէ:

Կեսարացի և Ակնեցի Հայերը պանդխտութեան կը պատրաստուին. հայրը կրնայ ըսել զաւակացը. «Այս տեղը նեղ կուգայ ձեզ, դնացէք, արշաւեցէք, գտնէք բազմ և տիրացէք անոր». ոչ մի կեսարացի կամ Ակնեցի Հայրական տունը թողած ատեն երեւակայած է բեռնակիր, բաղանեաց սպասուոր կամ նման բան մ'ըլլալ. անոր միտքն աստիճան մը տալուած է, իսկալ մ'ունի, որ կը տանի զինք կենաց սանդուղքին գէպ ի վերին աստիճաններն, և չ'թողուր ամենէն ստորինին վրայ:

Պանդուխտ կամ գաղթական շատ ունեցած են Հայերը. այս դարէն յառաջ մանաւանդ, Հայու ձեռներէց ու բազմաթիւ հոգին իր կեդրոնէն բազում շառաւիղներ արձակած է երկրագնդին այլ և այլ կողմերը. հետաքրքրական ու շահաւէտ է գիտնալ թէ ո՞ր տեղերու Հայերն պանդխտութեան ու գաղթականութեան մէջ յաջողեր են ծաղկել և ի՞նչպէս. սոհմային անաւանական պատմութեան տարեքն այդ ծանօթութիւններով կրնայ յօրինուիլ. այս դարու վերջին տմայ վերապահեալ է եղեր մեզ՝ տիրանալ այդպիսի հմութեան մը: Այվաղեան Արքայաժողով. իւր Հայ Կեսարացուքեանց Շարին երրորդ հատորն ի լոյս տալով, Հայ ազգին մի նորատեսակ համայնապատկեր ի հանդէս կ'ածէ. Քիթապնի Մարգարի անուն շուրջը կը համախմբէ դարու սկիզբն և անցեալ մէկ քանի դարուց մէջ տարող նշանաւոր հայերն ի սփռուս ազգաց. ծանօթ ու անծանօթ վայրերու ծակը ծուկը պրպտելով երեւան բերած է հայկական նշմարներ, հայ տիպարներ. ոչ մի անկեան խնայած է. գերեզմանոցները, եկեղեցիները, վանքերը, տալարանքները, հիւղակները վեր ի վայր դարձուցելով, փոշիները խառնելով, ձեռագիրներն ու տպագիրները խուզարկելով, մերձաւոր անցեալ ժամանակաց մեր պատկերը բերած դրած է պատմութեան տեսարանին վրայ իրենց մոքով, զգացումով ու գործերով. անպաճ ու անողորմ պատմիչ, որ ոչ մի անձնականութեան կը խնայէ, ոչ միայն առաւելութիւն կ'ընծայէ միւսին վրայ. ընթերցողն ուշադիր՝ կ'ընդհարէ սակայն թէ ո՞ր բնավայրի Հայերը պանդխտութեան կամ գաղթականութեան մէջ զարգանալ յաջողեր են, եւ

ի՞նչ օգտակարութիւն մատուցած են զիրենք արտադրող ընկերութեան:

Իւր այս աշխատութեամբ, Այվաղեան էֆ. իրաւամբ արժանի է ազգովին շնորհակալեաց. առանց իրեն, մեր տոհմային կենաց շրջանին մէջ զգալի պակաս մը պիտի ունենայինք, պիտի չկրնայինք ձանչել մեզմէ անմիջապէս առաջ տարող Հայ սերունդներն: Այս տեսութեամբ իւր գործոյն գընահատումն անտարակուսելի է Իզմիրեան կտակի Յանձնաժողովոյն կողմանէ:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

Մ Ր Տ Ի Լ Ե Ջ Ո Ւ Ն

Յոգնած, մեղկացած, ձանձրացած՝ զըզուած՝ անիմաստ գրականութենէ մը օտարացեալ ոճով, անհեթեթ գաղափարներով, Հայն քանի՜ երջանիկ պարտի համարիլ ինքզինքն՝ երբ վերստին կ'ողջունէ ու կը գրէ: զիւր Եղիան պաշտելի, որ կը հաճի վերջապէս յազեցնել նուաղելու մօտ Հայն անօթի:

Խեղք ու գրիչս միանգամայն տկար, չեն կարող ըստ արժանեցնել յայտնել զգացումներս Եղիայի յօդուածներու մասին: Բարեկամուհիներէս մին կ'ըսէ՝ որ Եղիա կը չափազանցէ գաստատուներու մասին իւր բարոյական վնաս գլխոյն մէջ. հրապարակաւ կը պատասխանեմ թէ ազգին մէջ առաջին անգամ ըլլալով կը հանգիստ մարդու մը որ այնքան լաւ ուսումնասիրած ըլլայ, ցաւալի է ըսել, մեր գաստատուաց ստուար մի մասը. թող ուսուցիչք ձեռքերին խզէրնուն վրայ՝ կարգան ու կրկին անգամ կարգան Եղիայի սոյն յօդուածն և մանաւանդ սա պարբերութիւնը, «գաստատուն պարտի սիրել իր կինը և իր կինը միայն. հանգիստը աղջկան հետ և մանաւանդ իր Աեակերսուկեաց հետ պէտք է սիրահարութիւն ընէ, ևն, ևն»: Ո՞վ կ'ըսէ թէ Եղիա հիւանդ է, մեծ զրպարտութիւն. Ծաղիկի մէջ յաջորդաբար երեւցած իր յօդուածներն յայտնի ապացոյցներ են թէ Եղիա հիւանդ է, այլ Յուսահատ մը, արդար ու մեծ Յուսահատ մը:

Եթէ ամեն օր ըլլար, պիտի խնայէինք իրեն. վախճալով զի մի գուցէ առատութեամբ վայելելու ըզձանօք վնասէինք իրեն, բայց մէկ անգամ, մէկ անգամ միայն չարաթը, կը յուսամ թէ չը պիտի զլանայ պատուականն Եղիա իւր յօդուածներով ողջունել Ծաղիկի անյագ ընթերցողներն: Դատարարական քաջաբերելով զ'Եղիա, դաս մ'եւս կուտայ իւր աշակերտաց, Դիսցոլին յարգը գիտնալու. Ինչպէս Տէմիրճիպաշեան կը հրաւիրէր զԴուրգէն վերահաստատել իւր կրթարանն Հայկական, այնպէս ալ ես բռնուն փափաք մը կ'զգամ հրաւիրել զՍուրենեան վերականգնել իւր համանուն վարժարանն՝ գէթ միայն սորվեցնելու համար իւր սանուց՝ Դիսցոլին յարգը գիտնալ. ո՞ գիտէ, քանի՜ Եղիանք քաջուած են՝ զգուած մեր նորածն սերունդէն, որ չէ սորված իր մանուկ հասակէն գիտցողն յարգել, մեր վարժարաններն այսօր մեծաւ մասամբ վէս մոքեր կ'արտադրեն որ կը յանգզին մինչեւ ծաղրել Եղիայի նման ամեն զըրուտտանաց ճշմարտապէս արժանի իրենց ուսուցիչն և մեծերն և հիներն. Թող Ծա-

ղիկ չը գովամակի իւր մի անկիւնը շնորհել անկեղծ սրտէս ու տկար գրչէս բղխեալ այս երկտողիս՝ որով կ'ուզեմ սրտաբուղիս ջերմ շնորհակալութեամբ յայտնել ազգագուտ գրագէտին, խնդրելով միանգամայն որ չը մոռնայ երբ երբեմն յիշելու թէ ազգին մէջ կը մնայ տակաւին մաս մը որ իր լեզուն անբաւական կը գտնէ թուելու համար Եղիայի նպատակն ազգային յառաջգիտութեան. կը շնորհաւորեմ նաեւ Ծաղիկի Ազնիւ Տնօրէնն որ այնքան լաւ գիտցած է ընել իւր խմբագրագետի ընտրութիւնը որ իր կարգին՝ թերթին ուղղութիւնն անփոփոխ պահելէ զատ, լաւագոյն գրողներն որսալու գաղտնիքն ալ գիտէ:

30 Մայիս 1893

ԱՐՈՒՍԵԱԿ

ԱՄԵՆ ԲԺԻՇԿ ԲԺԻՇԿ Զ'Է

«Մեզի բժիշկ ըսողները բժիշկ են ըսեր, ուսի ֆրէի չեն ըսեր», յոխորտաց երեսս ի վեր, եղբօրս հիւանդութեան տունն գործողութիւն մը կատարելու համար խորհրդագիտութեան կանչուած երեք բժիշկներէն մին, երբ գիտողութիւն ըրի իրենց՝ գործընթան անկատարութեան վրայ որով հիւանդըն աւելի կը տառապէր և որու ի տես սիրտը կը ճմլուէր: Թէեւ անկէց ի վեր տասը երկար տարիներ անցած են, այլ ամէն անգամ որ կը յիշեմ այդ դէպքը, սրտիս մէջ աննկարագրելի սեղմում մը կ'զգամ, մտածելով որ գուցէ այդ օրուան գործընթան անկատարութիւնը սիրեցեալ եղբօրս մահը փութացուցած էր, կամ թէ նոյն իսկ, ո՞ գիտէ, եթէ չափազանցութիւն չհամարուիր, մահուանն ալ պատճառ եղած էր... եւ սակայն ան անցաւ, այժմ ուրիշ մը պիտի պատմեմ. բայց նախ խորհուրդ մը պիտի տամ, միակ խորհուրդ մը. ի հարկէ բժիշկի մը ոչ գլխարկէն և ոչ ալ հագուստէն կարելի է ձանձնալ նորա կարող կամ անկարող ըլլալը. ուստի երբ բժիշկը ձեր հիւանդին հիւանդութեան անուն մը չգրէր և հիւանդըն ալ օր օրի կը վատանայ, մի յամառիք ըսելով թէ «Ամէն ալ բժիշկ են», այլ փութացէք ուրիշ հմուտ ձանչուած բժիշկի մը գիմել օր յառաջ, ժամ յառաջ, զի շատ անգամ յապաղումն է որ հիւանդութիւնը վտանգաւոր կը դարձնէ:

Ս... գիւղին մէջ, հօրեղբօրս Գ... էֆէնտի Ա... եանի դրացիներէն միոյն հազիւ քսանամեայ աղջիկը մի քանի օրէ ի վեր զգալի տկարութիւններ կ'ունենայ. մօտերը բնակող բժիշկը կը կանչեն որ հիւանդը զննելէ վերջ կ'ըսէ. (ուշադրութիւն). «բան մը չէ, շատ նիհար է, շատ դեղի պէտք ունի, Զղային տկարութիւն է, ամէն օր թող պաքտի, թթու ուտէ, գինի խմէ», ու երեք տեսակ դեղ տալով կը մեկնի. հիւանդին մայրը կ'սկսի ամենայն ճշգրտութեամբ տալ դեղերն, թթու կը կերցնէ, գինի կը խմցնէ, ամէն օր ալ դուրս կը հանէ. բայց եկու տես որ հիւանդն օր օրի աւելի կը տկարանայ, այլ ի՞նչ ընեն խեղճերը. վերջին ճիգ մ'ալ և ահա դեղը կը հատնի ու նորէն կը կանչուի բժիշկն որ կ'ըսէ. «Այժմ բան մը չունի, ուժի դեղ պիտի տամ քեզի, պաքտէ, պաքտէ ու պաքտէ». բայց հակառակ բժիշկին ամէն պատուիրանաց կէտ առ կէտ գործադրութեան, հիւանդը միշտ նոյն

վիճակին մէջ կը մնայ կամ աւելի գէշ կ'ըլլայ, այնպէս որ վերջապէս ազգականներու խորհրդով կ'որոշուի ուրիշ բժշկի մը գլխի վրայ, անուանի իւր արհեստին մէջ ունեցած յաջողակութեամբը. բժիշկը կը հասնի ու բաւական երկար քննելէ վերջ կ'ըսէ. (ուշադրութիւն). « Սրտի հիւանդութիւն է, քանի մը օր բնաւ չստիպիր, հանգիստ նստիր, թիւս բնաւ չ'ուտէ, գինի ալ չ'սմէ », ու մէկ տեսակ դեղ տալով կը մեկնի, և ահա արդէն կը լսենք թէ հիւանդն սկսած է ապաքինիլ. այժմ ընթերցողս թող գուշակէ թէ ի՞նչ պիտի լինէր խեղճ աղջկան վիճակն եթէ առաջին բժշկին ձեռքը մնար:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ս Է Ց Լ Է Ջ

Բարեկամ ոմն շահեկան տեղեկութիւններ հաղորդած է մեզ, Կէմբրիջի մօտ Սէօլէզ Հայաբնակ գիւղին վրայօք, որու մասին անցեալներն ակնարկութիւն ըրած էինք խմբագրականի մը մէջ: Իբր 1550 թուականին, Ակնայ Ապուշէս գիւղէն վեց Հայ ընտանիք եկած հաստատուած են Կէմբրիջին իբր երեք ժամ ներս, դէպ ի հիւսիսային Արեւելք, արգաւանդ տեղոյ մը վրայ ուր այժմ իրարմէ քիչ մը հեռի կը գտնուին երկու գիւղեր, մին Սէօլէզ Միւսլիմ և միւսը Սէօլէզ Ղայրը Միւսլիմ անուամբ: Այս անուանակոչութենէն ալ կը հասկնուի թէ միոյն բնակիչները մահմադարական (թուրք) են, միւսները քրիստոնէայ (Հայ):

Յայտնի չէ թէ այս վեց նախնական Հայ ընտանիք քանի անձէ բաղկացեալ էին: Քաղաքներու ընտանիքները սովորաբար 5—6 անձերէ կը կազմուին. գիւղերը, մանաւանդ քանի մը դար յառաջ, ընտանիքի մը անդամոց թիւը կրնայ 40—50, երբեմն մինչեւ հարիւրով հաշուուիլ: Ներկայ դարուս սկիզբը կատարուած մարդահամարը կը ցույնէ թէ գիւղին բնակչաց թիւն 1500ի հասեր է, իննսուն տնով:

Նախնի գաղթականաց ընտանեկան տնունները ցարդ անմահ մնացած են հինաւուրց յիշատակարանաց վրայ, որպիսիք են աղբիւրներ ու գերեզմաններ. անոնց սերունդներն ալ դեռ ևս չ'են մականուանով կը յորջորջուին:

Այդ 5—6 ընտանիքներէն զատ եկամուտ մեծաթիւ գաղթականութեան ու է յիշատակ չկայ գիւղին մէջ, որու բնակիչները պէտք չեն զգացած նաև ուրիշ տեղեր գաղթելու:

1550ի 5—6 ընտանիք անձեր ու բազմացեր են երկու ու կիս դարու միջոց, և ինչպէս ըսինք, 90 տուն կամ 1500 անձ եղեր են այս դարու սկիզբը: Անկից ի վեր աճումըն աւելի յորդ է եղած: Այժմ Սէօլէզ 750 տունէ կը բաղկանայ. բնակչաց թիւն է 8000, որ բնէ է 80—90 տարուան մէջ հնգապատիկ բազմութեամբ յառաջ եկեր է. առանցմէ 17 տուն բողբոջական են: Կայ եռադարի երկուսը վարժարան մը Լուսաւորչեան անուամբ, 1878ին նորոգ կառուցեալ, որու աշակերտաց թիւն է 600, ձմեռ եղանակին, ուսուցիչ և ուսուցչուհի 9, տարեկան ծախք 160 օսմ. սակի, որ կը գոյանայ կալուածէ և եկեղեցւոյ հասուծէ. աշակերտք թոշակ չեն վճարեր:

Գիւղն ունի ընտիր օդ և ջուր, հողը բերրի է. շրջակայ լեռներն իսկ կը մշակուին, թէպէտ հողագործութիւնն չ'ին եղանակաւ կը կատարուի. գլխաւորապէս այգիներն ու ձիթեռտանները շերամատածութեան հետ գլխաւոր աղբիւրք են տեղացւոց հարստութեան: Բայց հարկ պիտի ըլլայ քիչ տոնէնէն գաղթական հանել, ըստ որում մշակելի հողը միշտ նոյնը կը մնայ և աճող ժողովրդեան անբաւական դառնալ կ'սկսի:

Մանչրը 20էն 28 և աղջկունք 14էն 20 տարեկան հասակին մէջ կ'ամուսնանան. կենաց այս պայմանին կը հպատակին ամէնքն ալ:

Մինչեւ վերջին տասններս գիւղացիք առանց բժշկի ապրած են. իրենց վարած հանգիստ ու խաղաղ կեանքը գրաւական մ'է երկայնակեցութեան. բայց գլխաւոր միւլութիւն մ'ունին, շատ արբեցող են, զի շատ առատ են օղին և գինին, որ շատերու օրերը կը կարճեն: Այս տարի բժիշկ մը հաստատուած է գիւղին մէջ:

Ս.

ԱՌ ԹՈՉՆԻԿՆ

Ե Ր Գ

Մի' փախչիւր, դու հեռու,
Ո'վ անգուր սիրուն քոչուն.
Մի' մասնէր փութերու
Այս սիւսքս քեզմով լեցուն:

Առանց քեզ չունիմ յոյս,
Առանց քեզ աշխարհս է մութ,
Ո'հ, եկու՛ր, խեղճ հոգւոյս
Կը բաւէ յոյսն աչքերուդ:

Տե'ս, իմ սիւսքս է սառեւ,
Տո'ւր ի՞նչ սէրդ անոյց ու սաք,
Հալիմ սրճիս սառեւ,
Ինչպէս ձիւնն արեւուն տակ:

Ձեւ լութեր դուն, աւա՛ղ,
Իմ սրկար ձայնս երեւուն,
Հասաւ շունչքս նրաւ,
Դեռ հեռու կը փախչիս դուն:

Ձեմ ապրիւր ա'յ երկար,
Լըսէ գիս հեղ մ'ալ գոնէ,
Երբ մարմինս ծածկէ բար,
Նկո'ւր դուն եւ հո'ն բունէ:

Ողջ էի, մոռցար գիս,
Երբու հող դառնամ նորէն,
Այց ելի'ր գէր շիրմիս,
Եւ լա'ց գիս հոգւոյդ խորէն:

ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ

ՄԻՋՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԵԱՆՔԻ ՆՈՒԱԳՆԵՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Դին 2 Դրուշ

ԽՈՒՋԱՐԿՈՒՔ ԱՓՐԻԿԷԻ

Նախորդ յօդուածիս մէջ կը թուէի անուանքն ա'յն երեւելի խուզարկուներուն՝ որոց անձնութեան շնորհիւ Ափրիկէ՝ քաղաքակիրթ աշխարհի համար այլ եւս առաւելական գաղտնիք մ'ըլլալէ գաղթելով՝ մարդկային գործունէութեան և արնտեսական զարգացման լայնարձակ ասպարէզ մը կը դառնար:

Խաւարակուռ ցամաքին ներքին հիւրամերձ ու լափիչ տարածութիւններն խուզարկող մեծանուն անձանց մէջ՝ անդրանկութեան պատիւը կը վայելէ ՄՈՆԿՈ-ՓԱՐԶ Սկովտային, ծնեալ ի Սէլքիւրք, 1771:

Իւր ցեղին յատուկ բնական ամէն առաւելութիւններով օժտեալ՝ Մոնկո-Փարք ունէր ձեռներէց սգի, հաստատուն նկարագիր և անվատ յարատեւութիւն որոց շնորհիւ պատմական անձնաւորութիւն մ'ըլլալու սահմանեալ էր: Առաջին տեղամ, 1792ին, երբ տակաւին հաղիւ քսան և վեց տարեկան էր, Արեւելեան Հնդկաց Ընկերութիւնը զանի իբր վերադարձ ուղարկից ի Սուամաթրա՝ ուր երկամեայ արգիւնաւոր պաշտօնավարութենէ յետոյ վերադարձաւ Եւրոպա, իւր հետ բերելով գիտական ու աշխարհագրական թանկագին տեղեկութեանց մի պաշար որ մեծապէս գնահատուեցաւ և այնու զետեղեց Մոնկո-Փարք՝ իւր համարույն հիմնադրար:

Այս առաջին ուղեւորութենէն երեք տարի յետոյ, 1795ին, Լոնտոնի Ափրիկեան Ընկերութեան կողմանէ կը դրուի Արեւմտեան Ափրիկէ: Մոնկո-Փարք Սենեկալ գետէն կը նաւարկէ դէպ արեւելք, կը հասնի ի Յէլլադա՝ ուր երկու տարիէն աւելի մնալով՝ մանրամասնաբար կը խուզարկէ Սէկուի և Պամախի ովստիաններն, կ'ուսումնասիրէ տեղացւոց բարքը, երկրին բուսաբերութիւնը, կլիման և աշխարհագրական կարեւորութիւնը: Իւր այս առաջին ուղեւորութեան հետաքրքրաշարժ պատմութիւնն թարգմանուած է Եւրոպական շատ լեզուներու:

Այսպէս Մոնկո-Փարք սկսած էր իրաւամբ առ ինքն ձգել թէ՛ իւր հայրենակցաց և թէ՛ համորէն քաղաքակիրթ աշխարհի փտահութիւնն և անկեղծ սքանչացումը:

Ութամեայ հանգիստէ մը յետոյ, Անգլիական կառավարութիւնը յատկապէս պաշտօն կը յանձնէ Մոնկո-Փարքի՝ իւր սկսած կարեւոր գործն աւելի յառաջ տանիլ և այս անգամ մասնաւորապէս խուզարկել Նիկէրի հովիտը: Մոնկո-Փարք սիրով կը համակերպի Անգլիոյ կառավարութեան այս հրաւէրին և իւր կարեւոր պատրաստութիւնները տեսնելով՝ 1805 Մայիս ամսոյ մէջ ճամբայ կ'երէ: Կէպա քաղաքէն (Սենէկամպիա) և շարունակելով իւր ճամբան դէպ արեւելք, կը հասնի Նիկէրի մօտ՝ Պորկուի երկիրն: Քիչ յետոյ Մոնկո-Փարք իրեններով նաև կը մտնէ, կը յառաջանայ գետին հակառակ ուղղութեամբ բաւական տեղ, տառն տառն կուռելով ու զիմադրելով վայրենի քուարէներու յարձակմանց և վերջապէս կը հասնի Նաուրի, Հոն ժամանակ մը հանգիստ կ'առնու Մոնկո-Փարք և գետեզերեայ գիւղի մը կառավարչին այլ և այլ նուէրներ կուտայ, նմա յանձնելով նաև՝ Նաուրիի վեհապետին համար թանկագին ընծաներ: Սակայն զիւ-

զապետը՝ խորհելով որ իւր վեհապետին չափ ինքն ալ կրնայ զանոնք վայելել, չէնք չընորհք իրեն վար կը դնէ։ Միւս կողմանէ Սեւ աշխարհի իշխանն, տեսնելով որ այդ սպիտակամորթ օտարականը կը թերանայ իւր արժանայարգ մեծութեան նկատմամբ հարկ եղած պարտականութեան մէջ, սաստիկ նեղանալով՝ բանակ մը կը զրկէ նորա դէմ։ Մոնկո-Փարք յանկարծակիի կուգայ և կը պարտաւորի ճակատիլ թշնամոյն դէմ, ի Պուստ, գետին ամենէն յորձանուտ մէկ կէտին վրայ։ Անգլիացիք թշնամոյն նետերու տարափին տակ կ'իյնան ոգեսպառ, իւր սեւամորթ գերիները մազապուր կը պրծին, և ինքն Մոնկո-Փարք տեսնելով թէ իւր նաւն առանձինն չալիտի կարենայ վարել, կը նետուի գետը՝ լողալով դիմաց անցնիլ և ազատելու համար։ Սակայն արդէն իսկ պարտասեպ և իրեններուն դասալքութենէն յուսահատ՝ չկրնար դիմադրել հոսանքին կատաղութեան և այսպէս այն գետըն՝ որ եղած էր իւր փառաց ասպարէզը՝ կ'ըլլայ նաև անմահութեան գերեզմանը՝ Ափրիկէի անդրանիկ խուզարկուին։

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հայկական կրթարանի նախկին շրջանաւարտ և ծանօթ փառապան Յ. Խնճիճեան էֆէնտիի ամուսնութեան առթիւ, մեծանուն եղիա Տէմիրճիպաշեանի գրած խնդակցական նամակին պատճէնը կը հրատարակենք մեծ հաճութեամբ։ Եղիա զգացումներու փափուկ բացատրութիւն և ոճոյ նրբութիւն քիչ անգամ այսպէս յերեւան կուգան գրուածոց մէջ։

Սիւրեցեալ Յաւուրիւն էֆէնտի

Դեռ աչքիս առջեւ է պատկերը Հայկական կրթարանին մէջ, թուի սիրուն պատանի մը ծանրազուլտ ալ միանգամայն աշխոյժ, կալմութեամբդ՝ առողջութեամբդ՝ ուշիմութեամբդ և աշխատութեամբդ օրինակելի ուսանող մը։ Նոյնն եղար դպրոցէն դուրս ալ, ժիր, լուրջ, պարտաճանաչ, անձնուէր երիտասարդ մը, հապուաթս ալ յաճախողորձ, ու միշտ խորհող ու միշտ խոհական։

Կանուխ կորուսիր՝ հազիւ դպրոցէն ելած՝ պատուական հայրդ, որոյ մահն՝ իրեւ հանրային մարդ՝ հանուրց ցաւ ազդեց։ Անսայթաք ընթացոր իր գեծած շուղին վերայ և հոն առաջնորդեցիր եղբայրդ, արեան թէ՛ մտաց կրտսեր եղբայրներդ։ Կանգուն պահեցիր իր տունն, և իր անունն՝ անարատ։

Եւ երբ ես կը մտաբերէի քեզ ուրախակցիլ՝ որ ի քեզ կենդանի՝ պահեցիր սղբացեալ հայրդ, ուրախակցութեան նոր ստիպողական պարտք մը կ'աւելնայ վրաս։ Կ'ամուսնանաս։ Ընտրելու կարողութեանդ վրայ այնքան մեծ համարում ունիմ, որ բարեբաւորիկ ամուսնութեան մտալթանք իսկ աւելորդ պիտի համարիմ. երջանկութիւնն ո՛չ ապաքէն տուն և կնոջ կատարեալ համաձայնութեան անվրէժ արգիւնքն է։ Արդ, հաստատապէս բաժինդ պիտի ըլլայ երջանկութիւնն, սրովհետեւ քեզ հանգուանաւոր պէտք մ'ընտրեցիր։ Այլ ևս պէտք չունիս բանաս։

տեղծութիւն կարգալու, քանզի դէմդ ունիս կենդանի բանաստեղծութիւնն. եթէ միտքդ հանդիպի կնճռան, ուշիմ գորովակաթ ճառագայթաւէտ իր նայուածքին մէջ լոյս և ոյժ պիտի գտնէ։ Կենաց պայքարին անանուններ զայրացմանց տառն խրախոյս պիտի տայ քեզ կինդ, որ երկրաւոր հրեշտակդ պիտի լինի՝ որպէս ամեն առաքինուպտակ լծակից։

Հաւատքս է այս, այո՛, և ո՛չ մաղթանքս։

Բոյդ յաւէտ

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Զ.

Աղջկանց բարոյական դաստիարակութեան միջոցներ

Ազնիւ Աւուհեակ. — Աղջկանց բարոյականը կազմելու միջոցները. ահա՛ այս օրուան նամակին նիւթը։

Համառօտ ըլլալու համար՝ ըսեմ անմիջապէս թէ գլխաւորաբար հինգ են այս միջոցները որոց ամէն մէկն ունի իր մանրամասնութիւնները։

Ա. Բարւոյն նախապաշարումը տալ։

Բ. Բարոյական յոյզեր արթնցնել, խանդավառել զգացումները։

Գ. Բարւոյն ծանօթութիւնը աւանդել։

Դ. Բարոյագիտութեան դաս տալ։

Ե. Բարին գործելու վարժեցնել։

Ա. Դու գիտես թէ Սիրարփիս գեռ շատ պզտիկ է, երկու տարեկան գրեթէ բայց այժմէն կը դնեմ անոր բարոյական դաստիարակութեան հիմունքը՝ ի նմա հաստատելով բարւոյ նախապաշարումներ. վասն զի որչափ աւելի հին ու արմատացեալ ըլլան գաղափարք մեր էութեան մէջ, այնքան աւելի զօրեղ կերպով կը մղեն դմեզ գործելու անվէհեր։

Բայց կը ջանամ որ այդ նախապաշարմանց բնութիւնը ըլլայ այնպէ՛ս որ չկաշկանդեն մի օր գաւկիս միտքը անձուկ դադափարներով, այլ ապահովեն ընդ միշտ անոր մտքին թռիչք. և դարձեալ ըլլայ այնպէ՛ս որ բարոյականի խախտում սկզբունքներ չսփռեն անոր մտքին մէջ, այլ հիմնեն ողջ սկզբունքներ որք կարող ըլլան տոկալու ամէն քննադատութեան առջեւ։

Այսպէս երբ յաջողիմ, երախայութեան հասակին մէջ, ծնուցանել ի նմա՝ գէթ անորոշ կերպով՝ բարւոյն չարին բնազդը կամ զգացումը, այնուհետեւ ձեռք կ'առնում երկրորդ միջոցը։

Բ. — Մանուկին, և մանաւանդ մանկուհիին միտքը մինչ նոր կը զարթնու դեռ, անոր սիրտը կը բարբախէ արդէն. հետեւաբար, աւելի արգիւնաւէտ կ'ըլլայ սրտին խօսիլ, յուզել զանի, քան թէ ցամաք վերապետութիւններով անհասկնալի դառնալ։

Սիրարփիս՝ երբ երախայութենէ ի մանկութիւն թեւակոխէ՝ պիտի սկսի հասկնալ ու հասկցնել բաւական, այն տեսն ահա դիւրին պիտի ըլլայ ինձ բարոյական յոյզեր արթնցնել սրտին մէջ և խանդավառել

զգացումներ՝ իրական կեանքէ քաղուած պատեհ առիթներով, բարոյով պերով որք իրականութեան դրոշմը կրեն, պատմական դէպքերով, բանաստեղծութեամբ և բնութեան ուսումով։ Աստեք, ամէն մէկը, մէկ-մէկ կենդանարար աղբիւրներ են որք կըրնան առատարուղիս հոսեցնել բարոյական զգացումներու վտակներ՝ ո՛չ միայն մանկութեան հասակին մէջ, այլ և պատանեկութեան մէջ, ու կրնամ ըսել ամէն հասակի մէջ։

Այս պատճառաւ՝ մանկութեան շրջանին միայն չալիտի վերապահեմ վերոյիշեալ ստատարներուն կիրարկութիւնը, հապա պիտի շարունակեմ յաջորդ շրջանին մէջ ալ մինչեւ որ այլ եւս կարող ըլլայ ինքզինք վարել առանց կարօտելու իմ առաջնորդութեանս։

Գ. — Բայց բարի զգացումներ ներշնչելը միայն բաւական չալիտի ըլլար. վասնզի մեր գործողութեանց գերազանց առաջնորդը՝ խանդավառ զգացումն աւելի՛ բանին վճիռ լոյսն է։ Որչա՛փ ոճիրներ կը գործեն մարդիկ և որչա՛փ մոլութիւններու մէջ կը թաւալին միմիայն տգիտութեամբ։ Ինչ որ ընենք իմացականութիւնը լուսաւորելու համար, ի նպաստ բարոյականի ըրած կ'ըլլանք զայն, կը բաւէ որ նախնական դաստիարակութիւնը մինչեւ 6 կամ 7 տարեկան՝ կատարուած ըլլայ ըստ արժանոյն։

Ուստի, մանկութենէն սկսեալ մասնաւոր խնամով փոյթ պիտի ունենամ մշակել Սիրարփիս միտքը գրական ու գիտական ուսումներով։

Դ. — Բայց ինչպէս որ՝ լեզու մը ուղիղ գրելու և խօսելու համար՝ բաւական չենք համարիր միայն ընկերակցութիւնը, այլ ամբիօր կերպով լեզուին կանոնները կ'աւանդենք քերականութեան մէջ, նոյնպէս գրական ու գիտական ուսումներն ալ չեն բաւեր ցոյց տալու տղուն՝ կեանքին մէջ անխոտոր ճամբան. պէտք է յատկապէս սորվեցնենք այն ուսումն ալ որ կ'ամբիօրէ ուղիղ կեանքի կանոնները. այդ ուսումն է բարոյագիտութիւնը։

Եւ որովհետեւ հակառակ իմ խնամքներուն՝ օտար ազդեցութեանց բերմամբ, մինչեւ 12 կամ 13 տարեկան հասակը արդէն աւերիչ սովորութիւններ, ապականակիր բարքեր, սխալ համոզումներ կ'ընան մուտ գտնել ու արմատանալ զաւկիս բնութեանը մէջ, ուստի դեռ այդ տարիքին չհասած կ'աւանդեմ նմա բարոյագիտութիւնը, կարելի եղածին չափ չէզոքացնելու համար արտաքին ազդեցութիւնները և աւելի եւս զօրացնելու համար ներգործութիւնն նախորդ ստատարներուն զօրս յիշատակեցի։

Ե. — Ամէն դաստիարակութեան վերջնական նպատակն է գործելու ընդունակ ընել սանը. լոկ կրաւորականութիւնը կը թթաւցնէ, կը մեղմնէ։ Ուրեմն խորհուրդներ տալը ու տալաւորութիւններ ազդելը, սիրտ շարժելը ու միտք լուսաւորելը բաւական չեն բարք շինելու, պէտք է որ խորհուրդք և տալաւորութիւնք կամը ըլլան ի գործ վերածուին. պէտք է որ բնութեանը հետ շաղախուին։ Մարդ՝ դարձնելով է որ կ'ըլլայ դարբին։

Հետեւաբար իր անձին, իր ընտանիքին և իր նմանեաց նկատմամբ ունեցած պարտուցը մէջ պիտի ջանամ գործնականապէս հրահանգել Սիրարփիս՝ զգացնելով, ճաշած-

կեւ տալով նմա այն գոհունակութիւնն ու հաճոյքը զոր մարդ կուենայ իր պարտականութեանց կատարմամբ :

Եւ այս հինգ միջոցներու կարգադրութեանը մէջ միշտ ի մտի պիտի ունենամ թէ Սիրարիին իր եղբորմէն տարբեր կազմութեամբ, տարբեր միտումներ ու տրամադրութիւններ ունի : Թէ իր պաշտօնն ու պարտք նոյն չպիտի ըլլան իր եղբոր պաշտօնին ու պարտուց հետ : Եւ զատնք միշտ ի մտի պիտի ունենամ իմ ամէն դասերուն մէջ, մինչեւ իսկ իմ ամէն խօսակցութեանցը մէջ զոր պիտի ունենամ Սիրարիի հետ կամ Սիրարիի իւրեր :

Մնամ քոյդ
Սեղոմէ

ԼՈՒՍԱՏՈՒ ԿԵՆԳԱՆՆԵՐ

Լուսատու կենդանիներ ցամաքէն աւելի ծովու մէջ կը գտնուին : ամեն անոնք որք ծովեզերեայ տեղեր կը բնակին, անշուշտ պէտք է տեսած լինին ծովային այն լոյսը որ « փոսփորափայլութիւն » կ'անուանուի : Ալիքի տակ ապա մասին ստակն կը գրէ : « Երբ արեգակը մարի, լուսատու մանրադիտակային կենդանեաց անթիւ խուսեր, միջոց որոտային մի քանի պարագայից բերմամբ, ծովու մակերեսոյթին վրայ կ'երևին, ալեաց ծոցն մի նոր պայծառութիւն կը ծագի : ամենք կ'ըսեն թէ սփիւններ կը փորձէ վերադարձնել այն լոյսը զոր ցերեկը կ'ընդունի, սակայն այս տարօրինակ լոյսը միակերպ չը լուսաւորէր այն տեղն ուր կ'արտադրի : կը ծագի հոս ու հոն անհուն կէտերով որք յանկարծ կը վառին ու կը շողան : Երբ ծովը կատարելապէս հանդարտ լինի, մակերեսոյթին վրայ կը տեսնուին սաստիկ կայծեր որք կը ծփան և կ'երևան, և անոնց մէջ կը տեսնուին ինքնաշարժ չըջնալիկ հուրեր որք զիրար կը հալածեն և զիրար կը կտրեն : այս յանկարծակի տեսիլք կը միանան, կը բաժնուին, վերստին միմեանց կը մերձանան, և ապա շարժելէ դադարելով կը կազմեն կապուտիկ, աղօտ և տարտամ փոսփորափայլութեան մի ընդարձակ սիւնոց, որոյ մէջ տեղ տեղ կ'որոշուին պզտիկ շրջանակներ որք կը պահեն իրենց լոյսը : Երբ ծովը յաւաքալ լինի, թուի թէ ալիքները կը հրդեհին, կը բարձրանան, կը թաւալին, կ'եռան և կը փշրին փրփուրի հատերով որք կը փայլին և կ'աներեւութանան որպէս մի անհուն հնոցի փոքրիկ կայծերն : Երբ ալիքները ծովեզրի ժայռերուն զարնուին, ժայռերը լուսաւոր շրջանակներով կը ծածկուին, փոքրագոյն խուրձ իր հրային շրջանակն ունի (Քաթրը-Քոմ) : Հաճոյալի է տեսնել որ իբր գլուփիններու (եօնուզ) խումբ մը որք գլխերը կը խաղան, զարնելով, բաժնելով և ցրուելով այս սքանչելի ծովը (հումալու) : Թիւրու հարուածը ովկիանոսէն լոյս կը ցայտեցնէ : հոս տկար, նուաղ շարժուն և գրեթէ միմեանց կից, անդին պայծառափայլ, թափառական և ցրուեալ իբրեւ ցլացող մարդարիւններ : Ծոգեմաւերու անիւները կը յուզեն, կը վերցնեն և կը գահավիժեն ջրային ար-

ծաթափայլ փրփուրի գէղեր : Երբ նաւ մը ձեզքէ ալիքները, անոր առաջ կ'արձակին լոյս փոսփորի երկու ալիքներ : միեւնոյն ժամանակ խելքին ետեւը կը գծուի արծաթանշոյլ մի երկայն ափս որ գիտաւոր աստղի պոչին նման յամրաբար կ'աւրուի : գիտնոց ուսումնասիրութեան արժանի որքա՞ն գեղեցիկ նիւթ մ'է այս, և ի՞նչ սքանչելի ազդեւր բանաստեղծեց ներշնչման համար :

Ծովային փոսփորափայլութիւնը երբեք փոսփորի ներկայութիւն չը ցուցնէր : այս անունը միայն երեւոյթէն առնուած է : Փոսփորափայլութեան պատճառն է շատ փոքրիկ կենդանի մը, ցօքիլիւֆ միլիէր, որ ծովու ջրոյն մէջ կը գտնուի : Այս իրողութիւնը շատոնց ծանօթ է : Հ. Լապարտիէր որ 1791 ին ֆէրուզի խուզարկութեան համար զրկուեցաւ, հետեւեալ կը պատմէ : « Գիշերը, այն ատեն որ ծովը փոսփորափայլութեան վիճակին մէջ էր, ծովու ջուրէն մի քանի շիշ պահեցի, քննելու համար փոքրիկ լուսատու մարմինները որք փոսփորափայլութեան պատճառ են : Այս ջուրը գաւաթի մը մէջ պարպելով, խառրին տեղ մը շարժեցի : խիւղն տեսայ լուսատու գնդակիկներ որք երբեք տարբերութիւն չ'ունէին ծովու անհանդարտ եղած միջոցին տեսնուածներէն : ուղեցի գիտնալ թէ արդեօք այս ջուրը իւր փոսփորափայլութեան յատկութիւնը պիտի պահէ՞ր, եթէ կարենայի այս մարմինները ջուրէն զատել : ուստի ջուրը մզաթուղթով մը մըզեցի, պարզուտին վրայ մնացին գնդակային ձեւով, թափանցիկ, կարի մածուածային փոքրիկ կակղամորթներ որոց ամենուն տարածութիւնը առ առաւելն միլիմետրի մը երրորդ մասին չափ էր : յայնժամ ջուրը երբեք փոսփորափայլութիւն չը ցուցուց : Թէեւ կակղամորթները վերստին ջուրը դրի, սակայն իրենց յատկութիւնը կորսնցուցած էին, որով կ'երեւի թէ օդին մէջ մնալով շուտով կը կորսնցնեն իրենց փոսփորափայլութիւնը : Տարբեր ծովեզերաց ջրերով միեւնոյն փորձը շատ անգամ կրկնեցի և միշտ այդ մանրադիտակային կենդանիները գլուտայ, զորս կը նկատեմ սովորական պատճառ ծովային ջուրը փոսփորափայլութեան » :

Այս նկարագրութեան մէջ ցօքիլիւֆի համար թէեւ կակղամորթ ըսուած է, սակայն կակղամորթ չ'է : շատ պարզ կենդանի մ'է, կազմուած է ապէս մի փոքրիկ, թափանցիկ և մածուածային գնդակիկէ, և թեւաձեւ շարժուն մի մասէ : լոյսը այս մածուածային գնդակածին մէջ բազմաթիւ լուսաւորեալ կէտերով կ'արտադրի : լոյսը այն ատեն միայն յառաջ կուգայ՝ երբ այս կենդանիներէն պարունակող հեղուկը երեւայ : այսպիսի հեղուկ մը ամանի մէջ դրուելով երբ հանդարտ տեղ մը դրուի, երբեք նշոյլ մ'իսկ չը ցուցնէր, բայց երբ մի քիչ շարժի, խիւղն կ'սկսի պլավալ և կամայ կամայ կը շիջանի : Ծովային փոսփորափայլութեան պատճառ կը նկատուի նաև ուրիշ միջոցով մը որ կ'անուանի փոսփորափայլ պասիլ :

Մեր ծովեզերաց մօտ յաճախակի կը տեսնուի կակղամորթ մը, սորակեաց (pholade) որ ջրոյ տակ գտնուող փայլի ուղղահայեաց մի ծակին մէջ կը բնակի : սորակեացի մարմինը երկայն մաս մ'ունի որ մինչեւ ծակին

բերանը կը հասնի, ահա այս մասէն է որ կենդանայն շնչառութեան համար պէտք եղած ջուրը կը մանէ ու դուրս կ'ելնէ : Երբ այս կակղամորթը իւր ոտորէ ուտուի, բերանը բոլորովին փոսփորափայլ կը լինի, եթէ մէջը օտարակեաց գտնուող ջուր մը խառնուի, լուսատու նշոյլ կը տեսնուին :

Փոսփորափայլութեան երեւոյթը կը տեսնուի նաև կարգ մը ուրիշ ծովային կենդանեաց վրայ, ինչպէս են վիւննաքիւլ, փէլաժի, սէսք սի վիւննա, պէրօէ և այլն :

Վերջին ժամանակներ գիտական հետազոտութեանց նպատակաւ խրկուած մի քանի նաւեր հաստատեցին թէ ծովու մէջ լուսատու կենդանեաց շատ փայլուն տեսակներ կան : ի մէջ այլոց կը յիշուի շատ թեւեր ունեցող ծովաստղի մի տեսակն, Պրիզէկա, որոյ մարմնոյն ամեն կողմէն լոյս կը ճառագայթէ :

ԱՅՆԹԱՊ ԹԱԹՈՒԼ ՔԻԻԲԷԼԵԱՆ

ՀՈՂԸ ԵՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՔ ՅՈՒՆԻՍ ԱՄՍՈՅ ՀԱՄԱՐ

Բանջարեղինաց պարտէզ — Ծարունակեցէք ցանել և տնկել բոլոր այն բանջարեղէններն զորս թուեցինք նախորդ ամսոյ մէջ : Սաէպ սոէպ և առատապէս ջրեցէք զանոնք : Անօսարացուցէք՝ եթէ չափէն աւելի աճած են՝ կանխաւ տնկուած բանջարի, ստեղծիւնի, չողգամի և ասոնց նմաններու տունկերն : փորեցէք անոնց բոլորակն, ջնջելու համար այն վայրի խոտերն, որք կ'ապառնան տկարացնել զանոնք : Յառաջիկայ երկու ամիսներու միջոցին արեգական կիզիչ ջերմութենէն պատասխարեցէք փրփրեմն (սէմիզ օրու), կանաչ սոխերն և կարօսներն (էրէկվիզ), որք շատ տաքի չեն դիմանար : Զգուշութեամբ փորել և ուռեցնել պէտք է բազադներու արմատներուն հօգը, եթէ ժամանակին երեսանց ցանուած են անոնց սերմերն : իսկ եթէ եօթն կամ ութ մաս խորութեամբ ցանուած են, այն ատեն հարկ չկայ այս աշխատութեան, որուն նըպատակն է արմատները պատասխարել սաստիկ ջերմութենէ : հակառակ պարագայներու մէջ հասցուած բազադներն դեղին գոյն կ'ունենան և անհամ կ'ըլլան : Մի զլանաք պէտք եղած խնամքն՝ լոկիկներու (սոմար) տունկերուն համար ալ : աղբի ջուր (կիւպրէ Երպէրի) տունք անոնց արմատներուն, որպէս զի աւելի ուժովն :

Մառասանք — Ծարունակեցէք եղունգով փրցնել որթատունկի շատ երկնցած ծիւերն : Անօսարացուցէք կեռասների, սալորենիի, տանձենիի, դեղձիի, ծիրանիի, և թզենիի պտուղներն : փայտերու կապելով բարձրացուցէք երկատունկի ճիւղերն, որպէս զի անոնց պտուղներն մաքուր և ընտիր ըլլան : աղբի ջրով ջրեցէք անոնց արմատներն՝ առանց սակայն դալցնելու զայն տերեւներուն և պտուղներուն : Թաղարներու (սախսի) մէջ առէք, չորս մասի խորութեամբ, նորարոյս ծիւերն, և եթէ պէտք ունիք, նոր բարձեր կազմելով՝ մէկ մէկ ձեռք հեռաւորութեամբ տնկեցէք և առատապէս ջրեցէք զանոնք :

Կարտեցէք երակների և ծորենիի (Ֆրէնգիւզիւմի) մակաբոյժ ճիւղերն և հոգ տարէք

որ այս երկու տեսակ ծառերն առ առաւելն մէկ ու կէս կանգունէ՝ աւելի բարձր չըլլան. որովհետեւ որչափ բարձր ըլլան, սըլտուղինն ալ նոյն համեմատութեամբ քիչ կ'ըլլան:

Մաղկանց պարտէզ. — Անսորացուցէք տարեկան ծաղիկներն և անոնց տեղ տնկեցէք ուշ ծաղիկ բացող տունկեր, քաղցեցէք բացուած ծաղիկներն, նեցուկներու կապեցէք այն տունկերն որք ծաղիկներու ծանրութեան տակ կը խոնարհին հասուն գըլուխներու նման: Յանեցէք և տնկեցէք նաև կանթեղնիճ (չան չիչէյի), դեղին չափարակ, վաշտեւորի (տեսակ մը չափաբարձ. ՏՃ. Հիւսնի Եւսուռն), և գամառակաւոր (կիւլ հարկէմ):

Յ. Մ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԳԱՍԱՊԱ (Իզմիրի թեմ) 31 մայիս. — Ամսոյ 28ին, հինգշաբթի, մեծ հանդիսի և ցնծութեամբ կատարուեցաւ քաղաքիս Հայոց երկսեռ վարժարանին հիմնարկէքը, հին փլուզեալ վարժարանին գետնին վրայ: Իզմիրէն յատուկ հրաւերով այս հանդիսին նախագահելու եկած էր վիճակիս Առաջնորդ Տ. Ներսէս Ծ. Վրդ. Արքայանեան: Իզմիրցի յայտնի վաճառական ձէվաճիրճեան Յակոբ էֆ. որ իւր ծախիւք կառուցանել կուտայ այս ազգային տունը, հիման անկեանց քարերը զետեղեց օգնութեամբ զպրոցական տղայոց որ միանգամայն տաճկերէն երգ ու ճառ կարգացին. սրտագին բարեմաղթութիւններ եղան վասն կենաց Օգոստոսի տալիսին. Առաջնորդ և ժողովուրդ շնորհակալութիւն մատուցին բարեբար ձէվաճիրճեանի: Երէկ, կիրակի, 30 մայիս, Առաջնորդ Հայրը Ս. Պատարագ մատուց և յուզիչ քարոզ մը խօսեցաւ:

Յ. Յ. ԴԱՐՅԱՆՆԱՆ

ՄՈՍԿՈՒՍ, մայիս 27. — «Կրէմլին»-ի պալատի չըջարարողի մէջ գտնուած Զուլթալիկի վանքն գողեր մոտան վերջերս և եկեղեցու կամարակալ տանիքը ծակելով, յաջողեցան յափշտակել մէկ միլիոն երկու հարիւր հազար ռուբլի փողեր և արժէթղթեր, մէկ միլիոն ու կէս արծաթութեամբ էլ չողակրնեայ, փերուզէ և ադամանդէ թանկագին իրեղեններ: Ոմանք՝ այդ պատուական հրեւոթիւնների արժէքը երկու միլիոն ռուբլու են հասցնում: Թէ այդպէս և թէ այնպէս, երեք միլիոն ռուբլու գողութիւնն ամենքին զարմացրել է, որովհետեւ ամէն քայլափոխում զիշերապահ զինուորներ և անթիւ ծառաներ վստում են այդ ամուր և անմառաչելի վայրում:

Այսօր, ոստիկանութեան խիստ խուզարկութեան շնորհիւ, գողները, գոհարեղէն թէ՛ փող, գտնուած են սեղանի (ուր Սուրբ Պատարագ կ'մատուցուի) ետեւը գետնի մէջ թաղած: Թոշունն իրեն թեւերով և օձն իւր պորտով այդ սրբալոյսը մօտենալ անկարող են, ո՞ւր մնաց, որ հասարակ մահկանացուները մոտենով այդ անմառաչելի տեղը, վանքի թանկագին իրերը յափշտակէին. այդ ո՞չ ոք չէր երազել, ո՞չ մի ռուս մուսիկ (ռումիկ) իր մտքիցն անգամ չէր անցնել:

ԱՆՈՒԵԼԻ ՈՃԻՐ ՄԸ

Քիչ անգամ բայց ահա ի կերպիւ երևան կուգան srամներ, որոց պատճառն է ցոփ կնոջ կենցաղն: Ի Բերա Լինարտի փողոցին բնակիչներն այս երկուշաբթի գիշեր ականատես եղան այդ srամներէն միոյն: Իբր 40 տարեկան Աննէդա անուն առնաթող կին մը՝ իր Բիէր 20 ամեայ և Քրիսթինա 17 ամեայ զուգակց հետ՝ տանն տարիէ ի վեր այդ փողոցը տան մը մէջ կը բնակէր՝ Առեւտրական Ակումբին նախկին խոհարար Խաբիրոյի հետ, որ իւր հոմանին էր: Աննէդա կանոնէն լքած էր իւր ամուսինը՝ անոր նիւթական անկարողութիւնն իւր ճաշակին ու պէտքերուն անյարմար գըտնելով, և ձեռնարկած էր անարգարանալի կենցաղ մը վարել՝ ամէն օր իր անձը վաճառելով առաջին հանդիպողին: Տասն տարի առաջ Խաբիրոյի հետ կապուած և զուակներով միասին անոր հետ կենակցել սկսած էր. երկու տարի աւուրք չկրցան սակայն խաղաղ ապրիլ: Աննէդա՝ պահանջկոտ, ու սանձարձակ կենցաղ վարելու վարժ, Խաբիրո՝ կատաղի նախանձութեան տիպար, վերջապէս իրարու նկատմամբ անտանելի տարիաւորներ դարձան. զուակները մեծցած էին, և Աննէդա արդէն տարիքը առած՝ մտադրած էր թերևս նախկին ամուսնոյն քով վերադառնալ: Խաբիրո չկրնալով տանիլ հոմանոյն այս լքման դաղափառին, հուսկ ուրեմն այս երկուշաբթի գիշեր սաստիկ արեւնալով տուն կ'երթայ, անմիջապէս վէճ մը կ'սկսի տան մէջ, և Խաբիրո խոհանոցի դանակով խորապէս կը վիրաւորէ զԱննէդա՝ որ գրէթէ անմիջապէս կ'իյնայ գիտապատ. օգնութեան հասնող աղջկէն ալ զոհ կ'երթայ Խաբիրոյի կատաղութեան. մարդասպանն անոր ալ կոկորդը կը միտէ դանակը. կէս ժամէն դժբաղդը մեռած էր: Վերջապէս Բիէն կը հասնի և կը յաջողի զինաթափ ընել ոճրագործը, բայց մայրն ու քոյրը չուած էին արդէն:

Անմիջապէս բաղմութիւնը կը խռնուի փողոցին մէջ, ոստիկանութիւնը վրայ հասնելով կը ձերբակալէ զԽաբիրո. թէ տեղւոյն վրայ և թէ ոստիկանութեան կեդրոնին մէջ ընդ փոյթ կը կատարուին նախնական քննութիւնք, և այժմ գործն յանձնուած է Արդարութեան:

Աննէդայի նախկին ամուսինն Անգլիոյ հպատակ լինելուն, անգլիական հիւպատոսարանի կողմանէ կարգեալ երդուեալ-քննիչներ յետ ցննութեան վճռեցին թէ երկու զոհերուն վրայ ալ սպանութիւնը կամաւ գործուած էր:

Մօր և աղջկան յուղարկաւորութիւնը միասին կատարուեցաւ. առաջնոյն մարմինը սեւ և երկրորդինը ճերմակ սնտուկի մէջ դրուած՝ հետեւող խուռն բաղմութեամբ և նուազածուաց առաջնորդութեամբ՝ Թէփէ-պաշի Սէնդ-Ան-

դուան Լատին եկեղեցին տարուեցան, ուրկէ, յետ մեռելական աղօթից, փոխադրուեցան Լատինաց Բերայի գերեզմանատունը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերայի պարտուց հատուցման համար՝ Պատրիարքարանը հնգամեայ պայմանաժամաւ յանձնաժողով մը կարգեց, որոյ պաշտօնը պիտի լինի՝ Ա. Եկեղեցւոյ բոլոր կալուածները վարձու տալ և եկամուտը գանձել, Բ. կալուածական տուրքերը և ապահովագրութեան ծախքերը վճարել, Գ. հարկ եղած նորագութիւնները կատարել, Դ. Ամական 75 օսկի՝ յանուն կրթական ծախուց՝ Թաղական Խորհրդոյ սնտուկին յանձնել, Ե. պարտուց տոկոսները և մայր գրամը վճարել և զայն հետզհետէ ջնջել, Զ. Տասնամեայ միջոցի մէջ պարտքերն ամբողջովին ջնջելու համար՝ տարեկան գլխավճարի 10 առ 100 համեմատութիւնն անվճար պահելու պայմանաւ՝ կրթական ամսական դուստն աստիճանաբար 100 օսկոյ բարձրացնել, ստանալով կանխաւ Ազգ. վարչութեան հաւանութիւնը, Է. Տարեկան համարատուութիւնը մատուցանել առ կեդր. վարչութիւնն, և այս համարատուութեան հաշուեցուցի մէկ օրինակը հաղորդել Թաղ. Խորհրդոյ:

Յանձնաժողովոյ անգամ կարգուեցան Խոսեան Յովհաննէս, Հալաճեան Բարսեղ, Զէչէեան Կարապետ, Մկրեան Արտաշէս Էֆէնտիք և Մէրհամէթեան Զենոր պէյ:

— Ի Թիֆլիս վախճանեալ պարսկահպատակ վաճառական Զաքիա Թումանեանցի յիշատակին համար, եղբայրը՝ մահանսի Սիմէօն՝ նուիրեր է Բագուի Մարգարիտիկան ընկերութեան 1000 ռուբլի, Ս. Երուսաղէմայ վանքին՝ 500 ռուբլի, Բագուի աղջկանց դպրոցին՝ 200 ռ. Պարսկաստանի Թաւրէզ, Թէհրան, Մարաշ, Ռաշտ և Արտաւէլ քաղաքաց Հայոց վարժարաններուն 500 ական ռ., ընդամենը 4500 ռուբլի, (Իբր 500 օսմ. օսկի):

— Խաչատուր Արովեանի յիշատակին արձան կանգնելու և նորա գըրուածքները հրատարակելու համար՝ Նոր-Դարի առաջարկութեամբ բացուած հանգանակութիւնը կը շարունակուի ի կովկաս: Մինչեւ մայիս 22, Նոր-Դարի խմբագրութեան զրկուած գումարները կը հասնին 381 ռուբլի 60 կոպէկի:

— Այս տարւոյ Սահակ Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ներկայացուած են երեք գործեր. Տ. Հիւնքեարպէ-յէնտիեան Աւագ-Քահանայի Սուգաբանակալ բառգիրքը՝ որուն քննութիւնը կատարած են Եղիշէ վարդ. Դուրեան և Մատթիա էֆ. Գարագաշեան. Ար-

րահամ էֆ. Այվազեանի Շար Հայ Կենսագրութեանցը (երեք հատոր), և Ռուսահայտակ Հայ գրագէտ Քաղաքներու ձանապարհորդական Նկարագրութիւնք ցեղագրական և տեղագրական ստուար գործը: Այս վերջինը իւր ամբողջութեամբ յանձնաժողովոյ հասած չը լինելով, գալ տարուան մնացած է:

— Ս. Պատրիարք Հայրը կը շարունակէ մնալ ի Մաքրի-գիւղ երեք շաբաթէ ի վեր, առանց Պատրիարքարան իջնելու:

— Խասգիւղի Գալփայեան Որբանոցի մայր երանուհի մայրապետ Իգմիր գընաց, հանգանակութիւն ընելու համար ի նպաստ Որբանոցին:

— Ի Գասապա՝ մայիս 25ին տեղի ունեցեր է հիմնարկութեան հանդէսն Ազգ. վարժարանին որ, ինչպէս կը յիշուի, կը կառուցուի տեղացի աղագայիններէն ճէվահիրճեան էֆէնտիի ծախիւք: Հանդիսին նախագահէր է վիճակին Առաջնորդ Տ. Ներսէս Ծ. վարդապետ Ասլանեան:

— Ամիրիկայի Միացեալ-Նահանգաց Բող-Այլենդ-Նահանգի փոթըգէդ քաղաքի մէջ բնակող Քէսիրէկցի հայազգի Լորիտասարգ ք. Խարբերդի Քէսիրէք դիւղի Ուսումնասիրաց վարժարանին մէկ օրինակ տարեկան Ծաղիկ նուիրեցին, ձեռամբ Նիկողայոս էֆ. Տէր-Յակոբեանի:

— Արեւելի կ'իմանայ թէ, Երուսաղեմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան կը պատրաստուի քիչ օրէն մայրաքաղաքս ուղեւորելու:

— Երուսաղեմայ Պատ. փոխանորդ Տ. Սիմէօն Արքեպիս. Սէֆէրեան երկուշաբթի օր Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Մեծ. -Եպարքոս Բարձր ճէվատ փաշայի հետ:

— Եէնի-գարուի նոր թաղ. խորհրդայնագամ ընտրուեցան Պէրպէրեան Կարապետ, Սիոսեան Սարգիս, Թաղաւորեան Ստեփան, Այվատեան Տիրան, Հէքիմեան Մամաս, Ալլահվէրտեան Տիգրան, Քէօմիւրճեան Յարութիւն, Տէր-Եփրեմեան Կարապետ և Վարդաղարեան Դաւիթ էֆէնտիք:

— Քաղաքական ժողովը վաւերացուց Մաքրի-գիւղի թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը:

— Կրօն. Ժողով չը գումարուեցաւ այս շաբթու:

— Իրաւարանական վարժարանի նախորդ տարւոյ չըջանաւարտից (licencié) քննութիւնը, որը ինն ամիսներէ ի վեր կը շարունակուէին, շաբթուս աւարտեցան:

1888 տարւոյ արձանագրեալ 110 աշակերտներէն 38 չըջանաւարտը վկայականաց արժանացած են, որոցմէ 8 Հայ, 1 Յոյն և 2 Հրեայ, իսկ մնացեալք թուրք են: Հայ Շրջանաւարտից անուանք են, այբուբենի կարգաւ:

Բարսեղ էֆ. Կիւլպէնկեան, Կեսարացի, նախկին չըջանաւարտ Արամեան վրժ:

Մաքսուտ էֆ. Տեփանեան, Բարերդցի:

Միհրան էֆ. Թեւեան, Պոլսեցի, նախկին չըջանաւարտ Լիսէի:

Յակոբ էֆ. Իգմիրեան, Կեսարացի. Շարամ էֆ. Գաղանճեան, Երզնկացի. Սմբատ էֆ. Փափագեան, Բարերդցի, նախկ. չըջ. Հայկական Կրթարանի:

Ստեփան էֆ. Երամեան, Կէյվէցի, նախկ. չըջ. Հայկական Կրթարանի:

Տիգրան էֆ. Ալթունեան, Սեբաստացի, նախկ. չըջ. Այնթապի Գողթի:

Այս առթիւ մեզ կը հաղորդուի թէ այժմ իրաւագիտական վարժարան յաճախող մօտաւորապէս 300 ուսանողաց մէջ հազիւ ութ Հայ աշակերտք կը գտնուին: Թէեւ մօտից քննութեանց առթիւ դիմող Հայ ուսանողներն բազմաթիւ են, այլ ընդունուողք խիստ սակաւ: Ասոր պատճառն է Հայ աղագայոց անյաջողակութիւնն թուրք լեզուի մէջ:

— Արահամ փաշայի եղբայրը, Երամպէյ, չորեքշաբթի առաւօտ յանկարծամահ եղաւ իւր բնակարանին մէջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգոնաբաւսութիւնք. — Մաքսային վերատեսուչ Հասան Յէճմի փաշա՝ Այտընի նահանգին կուսակալ անուանեցաւ:

— Կայս. հրամանաւ՝ քաղաքային դատերու վճռագրոց գործադիր սլաշտօնեայ Սալիկ պէյ վաճառականական դատերու վճռագրոց գործադիր պաշտօնեայ, Պոլսոյ քաղաքային Բ. դատարանի նախագահ Սալիկ էֆ. վերաքննիչ դատարանի անդամ, Վաճ. դատարանի ծովային ճիւղին նախ. Օսման պէյ՝ պատժական գործոց տնօրէն, Վաճ. դատարանի անդամ Նիազի էֆ. ծովային դատարանի նախագահ, Իսկիւտարի Քաղ. դատարանին նօտար Մուսթաֆա էֆ. Պոլսոյ Քաղ. դատերու վճռագրոց պաշտօնեայ անուանեցան և այս առթիւ արդարութեան հակառակ չը վարուելու և Վեհ. Կայսեր ու Օսմ. Պետութեան անձնուիրաբար ծառայելու երդումն ըրին:

Աստիճանք. — Խասէքի կանանց հիւանդանոցին չէք ու կոկորդի հիւանդութեանց բժշկի գէրգնդապետ Աճէմեան Տիգրան ու Նէֆիզ պէյերու՝ Գնդապետութեան աստիճան, Մինապի հիւանդանոցին գեղագործ Թաղէս Մամուկէ էֆէնտիի՝ Սալիկէի աստիճան արուեցաւ:

Պատգոնացումք. — Վաճառական Կարապետ էֆ. Քօթիկեանի՝ Դ. կարգի Մէ. ճիւղից պատուանշան շնորհուեցաւ:

— Իւնեայի գայմագամ Էօմէր Ասաֆ էֆ. զեղծումներ գործած լինելով, Ճանիկի Իտարէի ժողովոյ կողմանէ անոր նկատմամբ նախնական քննութիւնք կատարուած են և արդիւնքը զրկուած է Տրապիզոնի կուսակալութեան:

— Տուրքի հաշուէ պարտք ունեցողներն, ըստ նորագոյն որոշման, բարձրագոյն որոշմամբ միայն պիտի կրնան բանտարկուիլ, ինչպէս տեղի կ'ունենան անչորժ կալուածներու վաճառումներ:

— Կրքական նախարարութիւնը հարկ եղած միջոցները ձեռք առած է՝ նահանգաց, գաւառաց, գաւառակաց և գիւղօրէից մէջ գտնուած նախնական վարժարաններն աւելի կանոնաւոր վիճակի մը վերածելու, վարժարաններ չգտնուած տեղը

վարժարաններ հաստատելու և այն նահանգաց կեդրոններուն մէջ, ուր նախնական վարժապետանոցներ չկան, ի նորոյ հաստատելու համար:

— Հնսալիս երեւան ելեր է ի Մէքքէ: Ի Պատրա՝ մայիս 26 էն 27 հնապիսեմ 30 անձ վարարիուեր և անոնցմէ ու առաջուան բռնուողներէ 19 անձ մեռեր են: Շրջակայ գաւառակայ մէջ եւս մէկ քանի գէպքեր ու մահեր պատահեր են:

— Մահուան դատապարտուած էր Տիւրիկի Թամարա գիւղացի Մանէնտօղլու Նազարէթ Մելիքեան՝ իւր գործած ոճրին համար: Վճռաբեկ ատեանը վաւերացուցած է այդ վճիռը, և Կայս. Իրաւէ մը հրամայած է գործադրել զայն:

— Պապը Երուսաղեմայ կառավարիչ Իպրահիմ փաշայի նուիրեր է Պիոս Թ. պատուանշանի Գ. աստիճանը:

— Երկրագործական մասնագիտաց Ժողովոյ նախագահ Արամ էֆէնտիի մատուցած ծրագիրն՝ ի մասին Թուրքիոյ մէջ երկրագործութեան զարգացման և երկրագործական վարժարանաց ու տիպար ագարակաց հաստատման, Բարձր. Մեծ-Եպարքոսին կողմանէ ընդունելի դատուելով, հարկ եղածը գրուած է որոց որ անկ է:

— Պոլսոյ նախնական դատարանի Հուգուգի երկրորդ ճիւղին նախագահ անուանեցաւ Գատրի էֆէնտի, անդամ վերաքննիչ ատեանին: Գատրի էֆ. երբուրեցաւ օրինաց հակառակ ընթացից մէջ չը գտնուիլ և հաւատարմորէն ծառայել Վեհ. Սուլթանին և իւր կայս. կառավարութեան:

— Խարբերդի նահանգին ոստիկան-գլխւորաց հրամանատար Ահիս պէյ ուրիշ սպայի մը ընկերակցութեամբ Խարբերդէն ճամբայ ելեր է Չմէլիածագի, Ահիայ և Արարիկի գաւառակայ մէջ քննական պտոյս մը կատարելու համար:

— Ըստ Մօնիթօրի, Ռուսական դեսպանն ուղեւորութիւն մը պիտի ընէ դէպ ի Միջերկրական ծով, և պիտի այցելէ զանազան տեղեր: Դեսպանը պէտք է մեկնած ըլլար երէկ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ

Հիւանդ ու չքաւոր ուսուցչի մը և նոյնպէս հիւանդ ու չքաւոր իւր մօրը համար նպաստ խնդրած էինք նախընթաց թուով: Նուիրատուութեանց Ա. ցուցակը կը հրատարակենք ի ստորեւ: Կը խնդրեմք որ բարեւէր անձինք փութացնեն իրենց նըպաստը: Այս մասին պիտի խօսինք յառաջիկայ թուով:

Տեարք	
Որ չուղեր յայտնուիլ	216 զրշ.
Սահակ Խանճեան	40 »
Սիմոն Գաբամանեան	30 »
Գրիգոր Զոհրապ	20 »
Տիրան Քէլէկեան	20 »
Կոստանդին Սպանդարեան	20 »
Օհան Խնտամեան	10 »
Գումար	
	356 »

Օսմ. իրան 100 զրշ. էն			
Մեծիադէ	107 28	Բուսիոյ բօլ	90 10
Քաւորդ մեծիա	107	Նաբոլէոն	87 20
Մանր մեծիա	103	Գրիմից	51 15
Մէթալիք	97 20	Անգլ. իրա	110 14
Գոնսուլտէ	24 13	Բուս. երկ.	89 1/4

Մանէթ թղթադրած 8 54	
ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ	
ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	
Էսկի-Չապքիէ փողոց, թիւ 61	